ԳԼՈՒԽ Ե.

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄ

1919 թվի սկզբից, Հայաստանը հետզհետէ սկսեց դուրս գալ այն դժոխային վիճակից, որի մէջ ընկել էր Թիւրքական արշաւանքի հետևանքով:

Ճիշտ է, կացութիւնը դեռ շատ էր ծանր: Թիւրքերի գործած աւերը զգացւում էր չափազանց սուր: Սովն ու հիւանդութիւնները, որոնք առատ հունձ էին անում 1918թ. վերջերին, շարունակում էին կոտորել և այժմ: Մանաւանդ, բծաւոր տիֆը, որ փոխարինել էր քոլերային, ամէն օր խլում էր հարիւրաւոր կեանքեր. մարդիկ մեռնում էին հիւանդանոցներում, հանրակացարանների մէջ, տներում ու փողոցներում, ամենքի աչքի առջև: Մեռնում էին գաղթականներն ու տեղացիները, աղքատներն և ունևորները: Մահը խտրութիւն չէր դնում*): Բազմաթիւ թանգագին կեանքեր խլեց նա. դեկտ. 2-ին մեռաւ հին յեղափոխական, ներքին գործոց նախարարութեան կարևոր յանձնարարութիւնների պաշտօնեայ Սարգիս Օհանջանեանը (Ֆարհատը), յունւ. 5-ին՝ Հանրապետութեան բժշկա-առողջապահական մասի վարիչ՝ բժ. Զ. Անդրէասեանը, յունւ. 11-ին՝ Հայաստանի անդրանիկ պետական վերահսկիչ Մ. Բերբերեանը, յունւ. 23-ին՝ Երևանի արքունական պալատի վարիչ Գ. Կամսարականը, յունւ. 30-ին՝ խճուղիների առաջին մասի պետ ինժ. Թորգոմ Նիկողոսեանը: Մեռաւ Երևանի քաղաքային վարչութեան անդամ՝ Ցակ. Ցարութիւնեանը, երիտասարդ գործիչ Փառնակ Ցակոբեանը: Բծաւոր տիֆին զոհ գնաց և Հայաստանի Հանրապետութեան կերտողն ու մեծագոյն գործիչը՝ Արամը, որ քառասունօրեայ տաժանելի տառապանքներից յետոյ, յունւ. 26-ին փչեց վերջին շունչը: Նրա մահը անդարմանելի հարուած էր Հայաստանի համար, և հասկանալի է այն խորունկ վիշտը, որ պատեց ամենքին. Արամի յուղարկաւորութիւնը փետր. 1-ին համաժողովրդական սուգի օր էր:

Հիւանդութիւնների պակաս թողածը լրացնում էր սովը: Մինչև արտասահմանից ալիւր ստացւելը, երկրի բոլոր կողմերից աղեկտուր կոչ ու հեծկլտանք էր լսւում. «հա՜ց, հա՛ց հասցրէք, մեռնում ենք»...

---

*) Պաշտօնական ցուցակագրութեան համաձայն, 1919 թվին, 5 ամսւայ ընթացքին, միայն Երևանում 3,972 մահւան դէպք էր պատահել: Ըստ ամիսների այդ մահերը դասաւորւում էին այսպէս. ապրիլ 742, մայիս 764, յունիս 899, յուլիս 766, օգոստոս 801: Եթէ Երևանի այն ժամանակւայ բնակչութիւնը, միջին թւով, հաշւենք 60,000 մարդ, իւրաքանչիւր հազարին կընկնի 161,2 մահ: 1913 թվին Եւրոպական Ռուսաստանում իւրաքանչիւր հազար մարդուց մեռնում էր 27,9 մարդ: